ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

«ԱՐԹԻԿԻ N4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ-Ի 2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան

1. Հաստատության գործունեությունը _____ **4**

ա) Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում_____ **5**

բ) Համապատասխանում է պետության քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբի կարիքներին և հնարավորություններին_____ **6**

գ) Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին _____ **7**

2. Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմեր_____ **10**

2. 1 Հաստատության շենքային պայմաններ_____ **10**

2. 2 Հաստատության նյութատեխնիկական բազան_____ **11**

2. 3 Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները_____ **12**

2. 4 Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ_____ **14**

2. 5 Հաստատության ուսումնական միջավայր_____ **15**

2. 6 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ_____ **16**

2. 7 Հաստատության տրամադրած կրթության որակը_____ **17**

2. 8 Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները_____ **19**

2. 9 Հաստատությունում առկա հիմնախնդիրները_____ **20**

2. 10 Առաջադիմություն_____ **22**

3. **3-8** բաղադրիչներն ընդգրկված են ներքոնշյալ Ձև **1**-ում_____ **23**

Ուղորտ **1.** Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան_____ **24**

Ուղորտ **2.** Կառավարման և խորհրդակցական մարմիններ_____ **26**

Ոլորտ **3**. Մանկավարժական համակազմ **27**

Ոլորտ **4**. Աշակերտական համակազմ **28**

Ոլորտ **5**. Ծնողական համակազմ **29**

Ոլորտ **6**. Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ **30**

Ոլորտ **7**. Ուսումնական միջավայր **31**

Ոլորտ **8**. Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների **32**

Ոլորտ **9**. Տեխնոլոգիաներ և հնարավորություն **33**

Ոլորտ **10**. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր **34**

9. Ակնկալվող արդյունքներ **35**

10. Դպրոցի ֆինանսատնտսական գործունեությունը 36

11. Վերահսկողության մեխանիզմներ **38**

12. Եզրափակում **38**

ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2023–2028 թթ. ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու մասին» հրաման N35-Ն պահանջներին համապատասխան:

1. Հաստատության գործունեությունը

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելուն և սերունդներին փոխանցելուն: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ - ի զարգացման 2023–2028 թթ. ծրագիրի հիմքում ընկած է «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքը, «Լեզվի մասին» ՀՀ օրենքը, Կրթակարգ, «ՊՈԱԿ-ի մասին» ՀՀ օրենքը, «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվական զարգացման պետական ծրագրը» և հանրակրթության պետական չափորոշիչը: Հաշվի են առնվել նաև մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները, սովորողների, ծնողների մոտեցումները, դպրոցում առկա հիմնախնդիրները և Արթիկ քաղաքի առանձնահատկությունները: Ծրագիրն ուղղված է դպրոցի աստիճանական զարգացման իրականացմանը՝ նախանշելով զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունը, որոնք ուղղակիորեն բխում են դպրոցի գործունեությունից:

Ծրագրի առանցքային գաղափարը դպրոցի զարգացման նոր ուղիներ գտնելն է, որը պետք է ծառայի սովորողի գիտելիքի, հմտության, դիրքորոշման և արժեքային բաղադրիչի զարգացմանը: Դպրոցը նպատակ ունի սովորողի համար դառնալու այն տեղը, որտեղ նա իրեն լավ է զգում և հարմարավետ պայմաններ կան կենսագործունեության համար: Ժամանակակից դպրոցից պահանջվում է՝ ձևավորել սովորող և սովորեցնող անձ, ձևավորել այնպիսի անձնային որակներ, որոնք կարողանան ապահովել սովորողի շարունակական ուսումը, ստեղծել նպաստավոր և տրամադրող պայմաններ հետազոտական գործունեության, նախագծային աշխատանքներ ստեղծելու համար, նպաստել սովորողների ինքնաճանաչմանը, ձևավորել ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն, երաշխավորել սովորողների ազատությունը, հաշվի առնել սովորողի նախասիրություններն ու կարողությունները:

ա) Դպրոցն ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում

Դպրոցը նախատեսված է 600 աշակերտի համար և իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական կարիքները.

1.Տարրական ընդհանուր - սահմանային թիվ 200, լիցենզիա Ա N0908, առկա սովորող՝ 100:
2.Հիմնական ընդհանուր - սահմանային թիվ 400, լիցենզիա Ա N0903, առկա սովորող՝ 101:

Զարգացման ծրագրով նախատեսվում է բավարարել սովորողի հետևյալ կրթական կարիքները.

- ✓ Համամարդկային և ազգային արժեքներ կրող
- ✓ Հայրենասեր և ազգասեր
- ✓ Բազմակողմանիորեն զարգացած և շրջահայաց
- ✓ Սեփական դիրքորոշում ունեցող
- ✓ Մասնագիտորեն կողմնորոշված

- ✓ Մրցունակ
- ✓ Մեդիագրագետ
- ✓ Ժամանակին համահունչ քայլող

Բարենպաստ կրթական միջավայրում ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով կձևավորվի 21-րդ դարի կարողունակ քաղաքացի: Դպրոցի առաքելությունը պետք է բավարարի սովորողի կրթական կարիքները՝ սահմանելով կրթության որակի բարձրացում և շարունակական զարգացում:

բ) Համապատասխանում է պետության քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբի կարիքներին և հնարավորություններին

Դպրոցի կրթական գործընթացի զարգացումը տեղի է ունենում պետության կրթական քաղաքականության միտումներին համահունչ: Ըստ զարգացման ծրագրի՝ դպրոցի կրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը, ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը, ով կներկայացնի ընտանիք, սերունդ, քաղաք, երկիր, պետություն: Կարևոր է նաև ապահովել համայնքի ներգրավվածությունը համագործակցության և փոխվստահության ակնկալիքով կրթության որակի բարելավման գործում: Դպրոցը համագործակցում է համայնքի հետ, աջակցում համայնքի կազմակերպած միջոցառումների անցկացմանը՝ համատեղ շաբաթօրյակներ, ծառատունկ, տոնակատարություններ, հանդիպումներ և մրցույթներ: Համայնքի ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, մասնավորապես՝ բաց դասեր, ազգային տոներ և տոնակատարություններ, հիշատակի օրեր, նշանավոր մարդկանց հետ հանդիպումներ և այլն:

գ) Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին

Հաստատության ենթակառուցվածքներն ու հնարավորությունները

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի N4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրակրթական տարրական և հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է: Արթիկի N4 միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1961 թվականին: Տվյալ շենքում դպրոցը տեղակայվել է 1987 թվականին: ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությանունը հաստատվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արթիկի տարածքային բաժնի կողմից: Վկայական N 15.210.00444: Դպրոցն օգտվում է իրավաբանական անձի իրավունքից, ունի զինանշանով կլոր կնիք, ձևաթղթեր: Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ: Հաստատության հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Արթիկ , Հակոբյան 8: Հաստատության ինտերնետային կայքի հասցեն – artik4@schools.am, դպրոցի վեբկայք՝ artik4.schoolsite.am Դպրոցական շենքը տիպային է, բաղկացած երեք մասնաշենքերից, օգտագործվում է ամբողջությամբ: Հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով, շուրջօրյա ջրամատակարարմամբ: Դպրոցում սովորում են 201 աշակերտներ: Ուսումնական պարապմունքներն անցկացվում են միահերթ, 5-օրյա աշխատանքային շաբաթով: Դպրոցում 2010 թվականից մեկնարկել է ՄԱԿ-ի ՊՀԾ կողմից կազմակերպած «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը, որը հնարավորություն է տալիս դպրոցի տարրական դասարանների աշակերտներին ապահովել առողջ, տաք սնունդով, հաղթահարել աղքատությունը, բարձրացնել դպրոցականների հաճախելիությունը: 2018 թվականի սեպտեմբերից ‹‹Դպրոցական սնունդ›› ծրագիրը իրականացվում է պետբյուջի ֆինանսավորմամբ:

Մարդկային ռեսուրսներ

Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և սովորողների համապատասխան կրթություն ստանալու մատչելիությունը: Այս առումով անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել առկա մասնագետների մասնագիտական որակների շարունակական բարելավմանը: Փորձառու մանկավարժական համակազմը, մասնակցային և համագործակցային աշխատանքը, համընդհանուր ներառական կրթության իրականացումը, շարունակական, սեմինարները, վեբինարները, վերապատրաստումները, դպրոցում ձևավորված գեղեցիկ ավանդույթները միտված են կրթության որակի բարելավմանը:

Դպրոցն ունի 37 աշխատակից, որոնցից 3-ը վարչական, 3-ը մանկավարժական, 10-ը ուսումնաօժանդակ աշխատողներ: Ուսուցիչները 20-ն են, 19-ը բարձրագույն մասնագիտական, 1-ը միջին մասնգիտական որակավորմամբ: 1 ուսուցիչ ունի առաջին աստիճանի տարակարգ: 1 ուսուցիչ մասնակցել է կամավոր ատեսավորմանը և ստամում է 30% հավելավճար: 1 ուսուցիչ 2017 թ-ին ճանաչվել է «Տարվա լավագույն ուսուցիչ»: Սահմանվել են նաև հետևյալ խրախուսման միջոցները («Տարվա աշակերտ», «Տարվա ուսուցիչ» անվանակարգերը, դրամական պարգևներ և շնորհակալագրեր՝ դպրոցը լավագույնս ներկայացնելու համար, շնորհակալագրեր հայրենիքի պաշտպանությանը մասնակցած շրջանավարտներին՝ դպրոցի սերմանած հայրենասիրական դաստիարակությանը հավատարիմ մնալու և հայրենիքի հանդեպ պարտքը պատվով կատարելու համար, ինչպես նաև բարերար շրջանավարտներին, որոնք մասնակցել են ավելի հարմարավետ կրթական պայմաններ ստեղծելուն):

Խորհրդակցական մարմիններ

«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրության համաձայն հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ: Շատ կարևոր է, որ խորհուրդներն ունենան իրական ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները: Մանկավարժական, կառավարման, ծնողական, աշակերտական խորհուրդներն ու մեթոդական միավորումներն ունեն իրենց կանոնադրությունը, աշխատանքային պլանը, գործում են օրենքով և դպրոցի կանոնադրությամբ նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում:

2. Իրավիճակի վերլուծություն. ուժեղ և թույլ կողմեր

2.1 Հաստատության շենքային պայմաններ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցի շենքը 2020 թվականին վերանորոգվել է «Հայ կրթական հիմնարկության» կողմից: Դպրոցն ունի լուսավոր, ընդարձակ և հարմարավետ շենքային պայմաններ՝ պատուհանները և դռները փոխված են, հատակը սալիկապատված և լամինատապատ: Դպրոցի տանիքը ևս վերանորոգված է: Դպրոցում առկա են 23 դասասենյակներ տնօրենի, փոխտնօրենի, վարչատնտեսական համակարգողի, ԴԱԿ-ի , ուսուցչի օգնականի, հաշվապահի աշխատասենյակներ, Փառքի սրահ, համակարգչային կաբինետ, ԱՐՄԱՏ լաբորատորիա, ՆԶՊ կաբինետ, գրադարան, բուժկետ, խոհանոց, ճաշարան, 12 սանհանգույց, պահակատուն, նկուղ, ապաստարան: Դպրոցն ունի սպորտհրապարակ, հանդիսությունների դահլիճ (120 տեղ)և մարզադահլիճ՝ ապահովված հանդերձարաններով, լոգարաններով, մարզիչի (ուսուցչի) սենյակով և լոգարանով: Դպրոցն ապահովված է լոկալ (գազի) ջեռուցման համակարգով, եռաֆազ հոսանքով, տարահանման 3 ելքերով: Դպրոցի ճաշարանը և խոհանոցը նույնպես ջեռուցվում են : Շենքի պայմանները համապատասխանում են անվտանգ շահագործման նորմատիվներին, պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը: Փորձել ստեղծել կամավոր ներդրողների միություն (ծնողներից, շրջանավարտներից, համայնքից) դպրոցի չվերավորագված մասերում նորոգման աշխատանքներ կազմակերպելու համար:	Դպրոցի տարածքը առանձնաց ված չէ ցանկապատով, բակը դեռևս ունի կանաչապատելու և ասֆալտապատելու կարիք: Դպրոցն ունի տեսախցիկների և գիշերային լուսավորության կարիք: Դպրոցի նկուղը , ապաստարանը և լոգարաններն ունեն վերանորոգման կարիք: Դպրոցում իրականացվում է ներառական կրթություն, սակայն չկան համապատաս-խան հարմարեցումներ, հարմարեցված սանհանգույց-ներ ԿԱՊԿՈՒ սովորողների համար:

2.2 Հաստատության նյութատեխնիկական բազան

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
2020թ-ի. վերանորոգման արդյունքում «Հայ կրթական հիմնարկության» կողմից տրամադրվել է մեծ քանակությամբ նոր գույք՝ նիստերի դահլիճի համար 120 աթոռ, գրատախտակներ՝ 9 հատ, ուսուցչական սեղան՝ 9 հատ, պահարան՝ 15 հատ, աշակերտական աթոռ՝ 60 հատ, աշակերտական սեղան՝ 30 հատ, համակարգիչ՝ 4 հատ, կախիչ՝ 10 հատ: Նվիրաբերվել է տնօրենի և փոխտնօրենի կաբինետներին անհրաժեշտ գույք՝ գրապահարաններ, աշխատանքային սեղաններ և աթոռներ: «Հայ կրթական հիմնարկության» կողմից վերանորոգվել է հին գույքը՝ երեսպատվել սեղաններ և աթոռներ: Դպրոցում գործում է նաև «Արմաթ» լաբորատորիա՝ համապատասխան գույքով:	Դպրոցի նյութատեխնիկական բազան չի համապատասխանում ժամանակի պահանջներին: Չկան նոր սարքավորումներով և նյութերով հագեցած լաբորատորիաներ, առարկայական կաբինետներ: Համակարգչային սենյակն առկա է, բայց ապահովված չէ ժամանակակից տեխնիկական միջոցներով՝ համակարգիչներ, էլեկտրոնային գրատախտակ, տպիչ սարքեր, պրոյեկտոր և այլն: Խոհանոցային սարքավորումների և գույքի թարմացման և համալրման կարիք կա: Դպրոցն ունի նաև սպորտային գույքի կարիք:

2.3 Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Կառավարման խորհուրդը բաղկացած է 9 անդամներից, որը պատշաճ կերպով իրականացնում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով և կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունները: Նրա գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը, խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում և մշտապես աջակցում է դպրոցի բոլոր նախաձեռնություններին: Մանկավարժական խորհուրդը ձևավորված է 25 մանկավարժ-ներից: 24-ն ունեն բարձրագույն, 1-ը միջին մասնագիտական կրթություն: 1 ուսուցիչ մասնակցել է կամավոր ատեստավորմանը, ստանում է հավելավճար, 1 ուսուցիչ ունի 1-ին աստիճանի տարակարգ, 1-ը 2017թ-ին ճանաչվել է «Տարվա լավագույն ուսուցիչ»: Ուսուցիչներն հաճախակի կազմակերպում են միջոցառումներ, բաց դասեր՝ համագործակցային մեթոդների և ՏՀՏ –ների կիրառմամբ: 3 ուսուցիչներ ցանկություն են հայտնել մասնակցելու ուսուցչի կամավոր ատեստավորմանը: Առկա է մանկավարժական կոլեկտիվի համախմբվածություն, հմուտ բազմամասնագիտական թիմ: Աշակերտական խորհուրդը բաղկացած է 16 անդամներից: Այն ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները և օժանդակում դրանց իրագործմանը:	Դպրոցը չունի հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդ: Որոշ ուսուցիչներ լավ չեն տիրապետում ՏՀՏ-ներին: Ուսուցիչների մեծամասնությունը խուսափում է կամավոր ատեստավորումից: Սովորողների մեծամասնությունը չի սիրում և չի կարդում գողարվեստական գրքեր, ցավոք տարեցտարի նվազում է հետաքրքրությունը գրքի նկատմամբ: Ծնողական խորհուրդը երբեմն պասիվ է դպրոցում առկա խդիրների լուծման հարցում և խուսափում է պատասխանատվու-թյունից:

Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ խորհուրդը պարբերաբար անցկացնում է հանդիպումներ սովորողների հետ և լուծում տալիս տարբեր խնդիրներին: Աշակերտական խորհուրդը կազմակերպում և անց է կացնում տարբեր բնույթի միջոցառումներ, որոնք ավելի հետաքրքիր են դարձնում դպրոցի առօրյան: Ծնողական խորհուրդը բաղկացած է 10 անդամներից: Այն մշտապես ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին: Սերտ համագործակցում է դպրոցի հետ: Ծնողական խորհուրդը դասարանական ծնողխորհուրդների աջակցությամբ կազմակերպում է էքսկուրսիաներ, այցելություն թանգարաններ, արշավ, զրույց դժվար դաստիարակվող սովորողների հետ և այլ միջոցառումներ: Դպրոցում առկա են 4 առարկայական մասնախմբեր՝ հումանիտար, բնագիտական, տարական, արհեստ-արվեստ, որոնք ամիսը մեկ անգամ գումարում են նիստեր, և կազմակերպում ուսումնադաստիարակչական աշխատանքներ:	

2.4 Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցը համագործակցում է ՀՀ կառավարության, ԿԳՄՍ նախարարության, Շիրակի մարզպետարանի, Արթիկի համայնքապետարանի , ԿԶՆԱԿ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի, ՊՆ-ի, Հայ առաքելական եկեղեցու Արթիկի թեմի, Արթիկի քաղաքային գրադարանի, ՌԴ հյուպատոսության, իրավապահ մարմինների, «Ինտերակտիվ» կրթության զարգացման հիմնադրամի, «Զևափոխվող», տարածաշրջանի այլ դպրոցների ու մանկապարտեզների, մեր դպրոցի շրջանավարտների և տարբեր հասարակական կազմակերպությունների հետ: Դպրոցը համագործակցում է նաև բնապահպանական ԾԻԳ-ի հետ, որի արդյունքում կանաչապատվելու է դպրոցամերձ տարածքը: Համագործակցությունը կապված է նաև այն բանի հետ, թե ինչքանով է դպրոցը ակտիվ և բարյացակամ գործընկեր այլ կազմակերպությունների հետ:	Կրթության ոլորտով հետաքրքրվողների համագործակցության և ներգրավվածության պասսիվություն: Ուսուցիչների մոտ թերհավատություն: Հոգաբարձուների և շրջանավարտների խորհրդի բացակայություն: Համագործակցության պասիվություն այլ մարզերի և արտերկրի դպրոցների հետ:

2.5 Հաստատության ուսումնական միջավայրը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Ուսումնական միջավայրը լուսավոր է, ընդարձակ, հարմարավետ, գեղեցիկ և կահավորված, ապահովված են սովորողների առողջության և անվտանգության պահպանման նորմերը, պահպանված է միջավայրի հավասարություն ու հասանելիությունը սովորողների համար։ Գրադարանը ապահովված է դասագրքերով, գեղարվեստական, մեթոդական և ծրագրային գրականությամբ։ Դպրոցն ունի շուրջօրյա ջրամատակարարում, լոկալ ջեռուցում։	ԿԱՊԿՈՒ աշակերտների համար չկան միջավայրի հարմարություններ։ Լաբորատորիաներ, անհրաժեշտ նյութեր, պարագաներ, գույք չկա։ Դպրոցի տարածքում չկա խաղահրապարակ և տարածքը ասֆալտապատ չէ : Համակարգիչները և պրոյեկտորը տեխնիկապես մաշված են։

2.6 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացում ապահովող միջոցառումներ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցի մանկավարժները ըստ հանրակրթության պետական չափորոշչային պահանջների ապահովում են հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն պահանջները: Ուսուցիչներն ըստ անհրաժեշտության պարբերաբար մասնակցում են մասնագիտական որակավորումների բարձրացման համար կազմակերպվող սեմինարների, վեբինարների և ունեն համապատասխան վկայականներ, հավաստագրեր: Դպրոցում հնարավորության սահմաններում ապահովվում է յուրաքանչյուր մանկավարժի համար հարմարավետ ստեղծագործական միջավայր: Ուսուցիչների մեծ մասը դասապրոցեսում կիրառում են ՏՀՏ-ներ, կազմակերպում են փորձի փոխանակում դպրոցի և այլ ուսումնական հաստատությունների մանկավարժների հետ: Ունենք մեկ «Տարվա լավագույն ուսուցիչ» (2017թ.) մրցույթի հաղթող, մեկ ուսուցիչ առաջին աստիճանի որակավորման տարակարգ ունեցող, մեկ կամավոր ատեստավորված, ով ստանում է 30% հավելավճար: Դպրոցում անցկացվում են ռազմահայենասիրական միջոցառումներ, դասեր, հանդիպումներ հերոսների և նրանց մտերիմների հետ, ֆիլմերի դիտում, ինչպես նաև այցելություն զորամաս:	Կան ուսուցիչներ, ովքեր քիչ են զբաղվում ինքնակրթությամբ և լավ չեն տիրապետում համակարգչին: Ուսուցիչների մեծ մասը խուսափում է ԿԳՄՄՆ կազմակերպած «Տարվա լավագույնները» մրցույթին և կամավոր ատեստավորմանը մասնակցելուց: Ուսումնական գործընթացում նկատվում է նախաձեռնողականության և ստեղծարարության պասիվություն:

2.7 Հաստատության տրամադրած կրթության որակը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Կրթության որակը սովորողի կրթական գործունեության և պատրաստվածության համալիր բնութագիրն է, որն արտահայտում է դրանց համապատասխանությունը Հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին և անհատի կրթական կարիքներին: Դպրոցն ապահովում է յուրաքանչյուր սովորողի՝ այդ թվում ԿԱՊԿՈՒ, կրթության և դաստիարակության հավասար իրավունքը: Մշտապես աշխատանք է կատարվում ուսման որակը բարելավելու, աշակերտների գիտելիքը, հմտությունը, դիրքորոշումը և արժեքային բաղադրիչը զարգացնելու ուղղությամբ՝ առողջության պահպանման, անվտանգ կենսագործունեությունը, ռազմահայրենասիրական, բարոյական դաստիարակությունն ամրապնդելու համար: Այդ են վկայում Արթիկի ավագ դպրոցի, քոլեջների և այլ դպրոցների ուսուցիչները, որտեղ տեղափոխվում են մեր աշակերտները: Դպրոցն ակտիվ մասնակցում է տարածքային, մարզային հանրապետական օլիմպիադաներին, բայց հանրապետական օլիմպիադաներում հողթողներ չենք ունեցել: Դպրոցն ակտիվ է նաև սպորտային միջոցառումներում և մարզում գրավել է պատվավոր տեղեր: Դպրոցում կազմակերպվում են դասարանական, արտադասարանական, դպրոցական, արտադպրոցական բազմաթիվ նպատակային միջոցառումներ, որոնք ընդլայնում են սովորողի աշխարհայացքը, նպաստում ճանաչողական ակտիվության, գեղագիտական ճաշակի ու մշակութային զարգացվածությանը, հայրենասիրական դաստիարակությանը:	Հանրապետական օլիմպիադաներին մասնակցության սակավություն: Բացառիկ կարողություններով աշակերտների սակավություն: Ուսուցիչները դեռևս չեն տիրապետում նոր ՀՊՉ-ին և հանդիպում են դժվարությունների:

Դպրոցի առաքելությունն է դաստիարակել այնպիսի մարդիկ, որ յուրաքանչյուր սովորող լինի հասարակությանը պիտանի, ինքնուրույն կյանքին լիարժեք պատրաստված, արդյունավետ շարունակի կրթության հաջորդ աստիճանը և կարողանա անցնել արժանապատիվ գործունեության: Ակտիվ աշխատանք է տարվում ստեղծել սերունդ, որը իր մեջ կրում է մասնակցային մշակույթը և արժևորում յուրաքանչյուր անհատի դերը:	

2.8 Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցն ունի համակարգչային դասասենյակ, որտեղ անցկացվում են ինֆորմատիկա առարկայի դասաժամերը, գործնական, լաբորատոր աշխատանքները, ինչպես նաև տարբեր տեղեկատվական, ինտեգրված և ցուցադրական դասեր: Ինտերնետի լիարժեք օգտագործումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին օգտվել տարբեր էլեկտրոնային կրթական հարթակներից, անհրաժեշտ ռեսուրսներից՝ մասնագիտորեն կատարելագործվելու, դասն ավելի հագեցած ու բավանդակալից անցկացնելու համար: «Արմաթ» լաբորատորիան ակտիվորեն գործում է՝ ներգրավելով բազմաթիվ աշակերտների: Ոչ բոլոր սովորողներն են տիրապետում են ՏՀՏ գործիքներին: Մեծ թվով սովորողներ հաճախում են <<Թումո>> կենտրոն և համակարգչային գրագիտությունը բարելավող այլ կենտրոններ:	Դպրոցի համակարգիչներն ունեն նորացման ու թարմացման կարիք: Պրոյեկտորը հին է և ունենք նորի կարիք: Քանի որ ոչ բոլոր ուսուցիչներն են տիրապետում համակարգչային ծրագրերին, ուստի կազմակերպել սեմինարներ, մեթոդական օգնություն և դասընթացներ համակարգչային գիտելիքները հարստաց-նելու նպատակով:

2.9 Հաստատության առկա հիմնախնդիրները

Ոլորտ	Խնդիրներ
Կառավարման և խորհրդակցական մարմիններ	1) Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև համագործակցության ամրապնդում: 2) Առարկայական մասնախմբերի համագործակցությունը այլ դպրոցների մասնախմբերի հետ:
Մանկավարժական համակազմ	1)Մասնագիտական որակի և դասավանդման մեթոդների արդիականացում և բարելավում: 2)ՀՊՉ-ի նոր պահանջների ներդրումը դպրոցում: 3) Մանկավարժական համակազմից կամավոր ատեստավորմանը, տարակարգին, «Տարվա լավագույնները» մրցույթին, մասնակցության խթանում:
Աշակերտական համակազմ	1)Ձևավորել կարողունակ քաղաքացիներ, ովքեր կլինեն մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ և սոցիումին ինտեգրված: 2)Դաստիարակել հայ, ով բազմազգ մոլորակում գիտակցի իր ազգային յուրահատկությունը ու մշակույթի բացառիկությունը և ձևավորել անհատականություն, ով կգիտակցի հայրենիքի և պետականության արժեքը:
Ծնողական համակազմ	1)Դպրոցի առօրյայում սոցիալապես անապահով ծնողների ներգրավվածության խթանում և մասնակցություն: 2) Ծնողական խորհրդի անդամներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին իրազեկում:

Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	**1)**Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու, ակտիվ քաղաքացու հմտությունների զարգացում: **2)**Համագործակցությունների շրջանակի ընդլայնում: **3)**Սոցիալ-մշակութային դպրոցի զարգացում**:**
Ուսումնական միջավայր	1)Ուսումնառության հարմարավետ և հաճելի պայմանների ապահովում: 2)Սովորողների մոտիվացիան ապահովող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում**:**
Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	**1)**Բարձրորակ կրթության, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում: **2)**Սովորողների մասնագիտական կողնորոշմանը միտված միջոցառումների ընդլայնում: **3)**Հանրակրթության պետական չափորոշչային պահանջների նվազագույն շեմը չհաղթահարող աշակերտների համար լրացուցիչ աշխատանքների կազմակերպում: 4) ԿԱՊԿՈՒ սովորողների համար խելացի հարմարությունների ստեղծում, ուսումնական միջավայրի բարելավում:
Տեխնոլոգիաներ և նորարարություն	1)Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրում դասապրոցեսում: **2)**Ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում, մեդիագրագիտության կարևորում ու զարգացում:
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր	1)Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ապահովել ուսուցիչների ակտիվ մասնակցությունը:

2.10 ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

Ուստարի	**2018-2019** ուստարի	**2019-2020** ուստարի	**2020-2021** ուստարի	**2021-2022** ուստարի	**2022-2023** ուստարի
Ընդհանուր առաջադիմություն	100%	100%	100%	100%	100%
Որակական առաջադիմություն	58%	60%	63%	65%	65%

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹԻՎ

Սեպտեմբերի **1**-ի դրությամբ	**2018-2019** ուստարի	**2019-2020** ուստարի	**2020-2021** ուստարի	**2021-2022** ուստարի	**2022-2023** ուստարի
Աշակերտ թիվ	139	144	157	200	201

2023Թ
- 201 ԱՇԱԿԵՐՏ

2028Թ
- 250 ԱՇԱԿԵՐՏ

3-8 բաղադրիչները ընդգրկված են ներքոնշյալ Ձև **1** աղյուսակում

3
- Նպատակների և խնդիրների սահմանում

4
- **Սահմանված նպատակների** և **խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների** և **միջոցառումների ժամանակացույց**

5
- Պատասխանատուներ

6
- Արդյունքների գնահատման չափանիշներ

7
- Ռիսկեր

8
- Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

Ոլորտ 1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան Ձև **1**

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանա-կացույց	Պատասխանա-տուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխ-նիկական պարագաներ
Դպրոցի չվե-րանորոգված հատվածների նորոգում (խոհանոց, ճաշարան, դպրոցի բակ, մարզադաշտ, նկուղ, աստիճաններ ապաստարա)	2023-2028 ուստարի	Հիմնադիր, լիազոր մարմին, կառավար ման խորհուրդ, տնօրեն, վարչատնտեսական համակարգող, տնտեսվար	Կառավարման խորհուրդը՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվու-թյունների ձևերի ու ժամանակա-ցույցի	Ռիսկեր ֆինանսական և աշխատանքայն ռեսուրսների բացակայություն, արտաբյուջե-տային միջոցների բացակայություն, համավակ, արտակարգ դրություններ: Ռիսկերը մեղմող գործողություններ Դպրոցի ողջ գործունեության լուսաբանումը՝ որպես աշակերտներին խրախուսելու միջոց: Հակահամաճարա կային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկում: Արդյունավետ ուսունմառության կազմակերպում :	Հիմնադիր, լիազոր մարմին, վարչտնտե-սական համակարգող, դրամաշնորհա-յին ծրագրեր, հովանավորներ, բարերարներ, արտա-բյուջետա յին միջոցներ:
Դպրոցի տարածքի պարսպապա-տում	2023-2028 ուստարի	կառավարման խորհուրդ, տնօրեն, վարչատնտեսական համակարգող, տնտեսվար			
Նյութատեխնի կական բազայի նորացում և համալրում	2023-2028 ուստարի	Հիմնադիր, լիազոր մարմին, կառավար ման խորհուրդ, տնօրեն, վարչատնտեսական համակարգող			

Ոլորտ 1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան Ձև **1**

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաներ
Դպրոցի գրադարանի արդիականացում, ծրագրային գեղարվեստական գրականությամբ համալրում, ուսումնաօժանդակ գրքերով համալրում:	2023-2028 ուստարի	տնօրենություն, ԱԽ, ԴԱԿ, տնտեսվար, վարչատնտեսական համակարգող, գրադարանավար	Կառավարման խորհուրդը՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի	Ռիսկեր ֆինանսական և աշխատանքային ռեսուրսների բացակայություն, արտաբյուջետային միջոցների բացակայություն, համավարակ, արտակարգ դրություններ: Ռիսկերը մեղմող գործողությունը Դպրոցի ողջ գործունեության լուսաբանումը՝ որպես աշակերտների ընդունելության խթանման միջոց: Հակահամաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկում: Արդյունավետ ուսումնառության կազմակերպում: Դպրոցի դերի բարձրացում:	Հիմնադիր, լիազոր մարմին, վարչատնտեսական համակարգող, դրամաշնորհային ծրագրեր, հովանավորներ, բարերարներ, արտաբյուջետային միջոցներ:
Էկոակումբի ստեղծում, դպրոցամերձ տարածքի կանաչապատում, խնամում:	2023-2025 ուստարի	կառավարման խորհուրդ, տնօրեն, վարչատնտեսական համակարգող , տնտեսվար			
Թեքահարթակների և խելացի հարմարեցումների ստեղծում:	2023-2025 ուստարի	կառավարման խորհուրդ, տնօրեն, վարչատնտեսական համակարգող , տնտեսվար			

Ոլորտ 2. Կառավարման և խորհրդակցական մարմիններ Չև **1**

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաներ
Շրջանավարտների խորհուրդի ստեղծում:	2023-2025 ուստարի	տնօրեն, ԴԱԿ	Կառավարման խորհուրդը՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի, տնօրեն, ԴԱԿ	Ռիսկեր Համավարակով պայմանավորված առկա շփումների նվազում, շահագրգիռ կողմերի՝ հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակաս: Ռիսկերը մեղմող գործողություններ Հակահամաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկում, հեռավար հարթակից օգտվելու կարողությունների զարգացում: Համագործակցության խթանում:	ԿԳՄՄՆ, լիազոր մարմին, համայնքապետարան
Խորհրդակցական մարմինների և կառավարման խորհրդի միջև համագործակցության ակտիվացում:	2023-2028 ուստարի	տնօրեն, ԴԱԿ, ԿԽ, ՄԽ, ԾԽ, ԱԽ			
Խորհրդակցական մարմինների գործառույթների պատշաճ կատարում, թափանցիկության ապահովում:	2023-2028 ուստարի				

Ղլորտ 3. Մանկավարժական համակազմ Ձև **1**

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաներ
Ուսուցիչների առաջավոր փորձի ուսումնասիրում և տարածում, մեթոդական աջակցություն սկսնակ ուսուցիչներին, հանդիպում մենթոր ուսուցիչների հետ: Սեմինարներ, վեբինարներ, ինքնակրթության, ինքնավերլուծության խթանում, դասավանդման որակի բարելավում:	2023-2028 ուստարի	տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, մ/մ նախագահներ մենթոր ուսուցիչներ,	ԿԽ-ն՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի, տնօրեն, ԴԱԿ, ՄԽ	Ռիսկեր Համավարակով պայմանավորված առկա շփում ների նվազում, շահա- գրգիռ կողմերի՝ հեռավար հարթակներից օգտվելու հմտու թյունների պակաս: Ռիսկերը մեղմող գործողություններ Հակահամաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկում, հեռավար հարթակներից օգտվելու կարողությունների զարգացում: Ինքնակրթության խթանում, ուսուցիչների որակավորման բարձրացման ուղղությամբ աշխատանքների խթանում: Կրթության և դաստիարակության որակի բարելավում:	ԿԳՄՍ, ԿԶՆԱԿ, լիազոր մարմին ՀՄԿ, ՏՄԱԿ, ՀԿ-ներ
Մանկավարժական համակազմից կամավոր ատեստավորմանը, տարակարգին, «Տարվա լավագույնները» մրցույթին դիմելու ցանկության խթանում: Մասնագիտական որակի և մեթոդների արդիականացում և բարելավում: ՀՊՉ և առարկայական չափորոշչայի պահանջների ապահովում:	2023-2328 ուստարի	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, մ/մ նախագահներ ԿԶՆԱԿ			
Ուսուցիչների վերապատրաստում, սեմինարներ, առաջավոր փորձի փոխանակում, ներդպրոցական վերահսկողություն:	2023-2028 ուստարի	տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, մ/մ նախագահներ ԿԶՆԱԿ			

Ոլորտ 4. Աշակերտական համակազմ Զև **1**

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ, կրթական գործընթացին առավելագույն մասնակցություն և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքի ապահովում: Անվճար խմբակների գործունեության ծավալում	2023-2025 ուստարի	տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, ուսուցիչի օգնական, ԴԱԿ	Կառավարման խորհուրդն՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի, տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնա կան աշխատանքի գծով, ԴԱԿ, ԱԽ	Ռիսկեր Համավարակով պայմանավորված առկա շփումների նվազում, շահագրգիռ կողմերի՝ հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակաս: Ռիսկերը մեղմող գործողություններ Հակահամաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկում, հեռավար հարթակից օգտվելու կարողությունների զարգացում: Սովորողների ինքնակրթության, սոցիումին ինտեգրման խթանում, ուսուցիչների որակավորման բարձրացման ուղղությամբ աշխատանքների խթանում:	ԿԳՄՄՆ, ԿԶՆԱԿ, լիազոր մարմին, վարչատարածքային կառավարման մարմին, ՀՄԿ, ՏՄԱԿ, ՀԿ-ներ, դրամաշնորհային ծրագրեր, հովանավորներ, բարերարներ,արտաբյուջետային միջոց; Համակարգիչներ, լաբորատորիաներ, ուսումնական նյութեր , սարքավորումներ, դիդակտիկ պարագաներ
•Հրապուրիչ կրթական միջավայրի ստեղծում •Սովորողների մոտիվացիայի խթանում •Ուսումնառության որակի բարելավում •Աշակերտների բազմակարծության, ինքնավարության, մասնակցային արժեքների խթանում •Արժեհամակարգի ձևավորում •Համագործակցային շրջանակների ընդլայնում •Աջակցություն աշակերտական խորհրդի նախաձեռնություններին •Մասնագիտության ընտրության կողմնորոշում •Հալածանքի, օտարման, բռնության բացահայտում և կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկում:	2023-2028 ուստարի	տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով ,ԴԱԿ, մանկավարժական խորհուրդ, ուսուցչի օգնական			

Ոլորտ 5. Ծնողական համակազմ Ձև **1**

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները, նյութատեխնիկական պարագաները
Սոցիալապես անապահով, ծնողազուրկ ընտանիքներին աջակցության ցուցաբերության ակտիվություն:	2023-2028 ուստարի	տնօրեն, դասղեկներ, ԴԱԿ	Կառավարման խորհուրդը՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի, տնօրեն, ԴԱԿ, ԾԽ	Ռիսկեր Համավարակով պայմանավորված առկա շփումների նվազում, շահագրգիռ կողմերի՝ հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակաս: Ռիսկերը մեղմող գործողություններ Հակահամաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկում, հեռավար հարթակից օգտվելու կարողությունների զարգացում , ընտանիք-դպրոց սերտ համագործակցության ապահովում:	Լիազոր մարմին, ՀԿ-ներ,
Ներդպրոցական և արտադպրոցական տարբեր միջոցառումներին ակտիվ մասնակցություն:	2023-2028 ուստարի				
Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավում Դպրոցում իրականացվող տարբեր հասարակական աշխատանքներին ծնողների ներգրավվածության խթանում:	2023-2028 ուստարի				

Ոլորտ 6. Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ Ձև 1

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություն.	Միջոցները և նյութատեխ. պարագաները
Համայնքի հետ համատեղ ծրագրերի իրականացում սովորողների և ծնողների մասնակցությամբ (թղթի մակուլատուրա, շաբաթօրյակներ, ծառատունկ և այլն):	2023-2028 ուստարի	տնօրեն, դասղեկներ ԴԱԿ	Կառավարման խորհուրդը՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի, տնօրեն, ԴԱԿ, ՄԽ, ԾԽ, ԱԽ	Ռիսկեր Համավարակով պայմանավորված առկա շփում ների նվազում, շահագրգիռ կողմերի՝ հեռավար հարթակներից օգտվելու հմտություններ-ի պակաս: Ռիսկերը մեղմող գործողություն ներ Հակահամաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկում, դպրոց-համայնք կապի սերտացում:	ԿԳՄՄՆ, լիազոր մարմին, համայնքապետարան, ՀԿ-ներ Ձեռնարկ ատիրական նախաձեռնություն, Շաբաթօրյակ, ծառատունկ,այցելություն թանգարաններ, թատրոններ,մշակութային օջախներ
Սոցիալ-մշակութային դպրոցի կայացում. •Ստեղծել մշակութային, արհեստի և արվեստի խմբակներ: •Կազմակերպել նկարչական մրցույթներ և ցուցահանդես-վաճառք, էքսպո՝ համայնքի և ծնողների ներգրավմամբ: •Կազմակերպել միջոցառումներ, մշակութային ծրագրերով հանդես գալ համայնքի տարբեր շրջաններում: •Ձևավորել հոգատար վերաբերմունք համայնքի, շրջակա միջավայրի նկատմամբ :	2023-2028 ուստարի	տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, ԴԱԿ, դասղեկներ ,ԾԽ, ԱԽ			
Համագործակցությունների շրջանակի ընդլայնում: •Հանդիպումներ համայնքի ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների հետ: •Պետության կողմից տրամադրած դպրոցական աբոնենտային համակարգի կիրառումը՝ խթանելով դպրոց-մշակութային օջախ կապը, նպաստելով աշակերտների գեղագիտական դաստիարակությանը	2023-2028 ուստարի				

Ոլորտ 7. Ուսումնական միջավայր Ձև **1**

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություն.	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Լաբորատորիաների ստեղծում և համալրում, առարկայական կաբինետների համալրում : Դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդրում դասապրոցեսում: Գնահատման տարբեր ձևերի կիրառում:	2023-2028 ուստարի	Լիազոր մարմին, տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, դասղեկներ ԴԱԿ	Կառավարման խորհուրդը՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի, տնօրեն, քաղաքաշտպանության շտաբի պետ	Ռիսկեր Ոչ բավարար ֆինանսական միջոցներ, արտաբյուջեի բացակայություն Ռիսկերը մեղմող գործողություններ Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում:	Պետական բյուջե, բարերարներ հովանավորներ
Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու հանգիստը արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում:	2023-2028 ուստարի	տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով			
Անվտանգ ուսումնական միջավայրի ապահովում: Արտակարգ իրավիճակների դեպքում իրավիճակի կառավարում:	2023-2028 ուստարի	տնօրեն, քաղաքաշտպանության շտաբի պետ ԴԱԿ, դասղեկներ			

Ոլորտ 8. Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

Չև **1**

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություն.	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
•Կրթության որակի բարելավում, ՀՊՉ-ով սահմանված վերջնարդյունքների ապահովում, աշխատանք ԿԱՊԿՈՒ և դժվար դաստիարակվող սովորողների հետ: •Առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում:	2023-2028 ուստարի	տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական գծով, դասղեկներ, մանկավարժական համակազմ	Կառավարման խորհուրդը՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի, տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով	Ռիսկեր Համավարակով պայմանավորված առկա շփումների նվազում, շահագրգիռ կողմերի՝ հեռավար հարթակներից օգտվելու հմտություններ-ի պակաս: Ռիսկերը մեղմող գործողություններ Հակահամաճարակային կանոնների պահպանում, կրթության որակի բարձրացում, դպրոցի առօրյայի ու թափանցիկ գործունեության լուսաբանումը սոցիալական ցանցերում և դպրոցի կայքէջում՝ որպես ընդունելության խթանման միջոց:	Պետական բյուջե, Արտաբյուջե
Հանրակրթության պետական չափորոշչային պահանջների նվազագույն շեմը չհաղթահարող աշակերտների համար ուսուցումը խթանող աշխատանքների կազմակերպում:	2023-2028 ուստարի	տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական գծով, դասղեկներ, մանկավարժական համակազմ, ԴԱԿ			
Դաստիարակության և ուսման բովադակությունն ապահովող անհրաժեշտ պայմանների ստեղծում: Դպրոցի դաստիարակչական միջավայրի վերլուծություն և առկա խնդիրները բացահայտում և անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկում:	2023-2028 ուստարի				

Ոլորտ 9. Տեխնոլոգիաներ և նորարարություն Ձև **1**

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություն.	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
•Մեդիագրագիտության վերաբերյալ սեմինարների, քննարկումների անցկացում: •նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրում դասապրոցեսում, ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում, •մեդիագրագիտության կարևորում ու զարգացում: •Էլեկտրոնային կրթական ռեսուրսների կիրառում, ստեղծում:	2023-2028 ուստարի	տնօրինություն, ԿՁՆԱԿ, ՏՄԱԿ, ՀՄԿ , մանկավարժական համակազմ	Կառավարման խորհուրդը՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի, տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, ԴԱԿ, ՄԽ, ԾԽ, ԱԽ	Ռիսկեր Ֆինանսական և աշխատանքային ռեսուրսների բացակայություն արտաբյուջետային միջոցների բացակայություն համավարակ, արտակարգ դրություններ: Սովորողների թվի պակաս: Ռիսկերը մեղմող գործողություն ներ Դպրոցի առօրյայի ու թափանցիկ գործունեության լուսաբանումը սոցիալական ցանցերում և դպրոցի կայքէջում՝ որպես ընդունելության խթանման միջոց, Հակահամաճարակային կանոնների պահպանում, կրթության որակի բարձրացում:	ԿԳՄՄՆ լիազոր մարմին պետական բյուջե, ՀԿ-ներ բարերարներ, դրամաշնորհային ծրագրեր
Առարկայական դասասենյակների բացում, ռեսուրսների համալրում, ժամանակակից գրականության ձեռքբերում:	2023-2028 ուստարի	տնօրինություն, մանկավարժական համակազմ			
Նոր սերնդի համակարգչային տեխնիկայի համալրում:	2023-2028 ուստարի	ԿԳՄՄՆ, լիազոր մարմին, տնօրեն			

Ոլորտ 10. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր ռիսկերը մեղմող գործողություն.	Միջոցները նյութատեխնիկական պարագաները
Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ապահովել ուսուցիչների ակտիվ մասնակցությունը:	2023-2028 ուստարի	տնօրինություն, , մանկավարժական համակազմ, մ/մ նախագահներ	Կառավարման խորհուրդը՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի:		
e-draft.am կայքի ներկայացում, հանրային քննարկման դրված ակտերի ներկայացում:	2023-2028 ուստարի	տնօրինություն, մանկավարժական համակազմ, մ/մ նախագահներ			

9. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1. Հրապուրիչ և որակյալ կրթական միջավայր
2. Վերանորոգված և նյութատեխնիկական բազայով հագեցած առաջատար դպրոց
3. ՏՀՏ միջոցների լիարժեք ներդրումը, կիրառումը դասապրոցեսում
4. Փորձառու և ճանաչված մասնագետներ, նորարար և ստեղծագործ ուսուցիչներ
5. Ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան ԱԽ,ԾԽ գործունեություն
6. Սոցիալ-մշակութային կենտրոն դպրոցի ստեղծում, աշակերտ թվի ավելաց ում
7. Սովորողների բարձր ցուցանիշներ առարկայական օլիմպիադաներում
8. Ապագա մանագիտության ճիշտ կողմնորոշում և ընտրություն
9. 21-րդ դարի, ստեղծագործ, կարողունակ և մրցունակ քաղաքացու ձևավորում

10. Դպրոցի ֆինանսատնտսական գործունեությունը

Դպրոցավարության մյուս կարևոր ուղղությունը նրա բյուջետային հնարավորություններն են: Դպրոցը հիմնական և հաճախ միակ ֆինանսավորումը ստանում է պետական բյուջեից: Չափազանց կարևոր է ճիշտ պլանավորումը և խնայողությունները, որոնց արդյունքում հնարավոր է որոշակի տնտեսումներ, որոնք կուղղվեն այլ առաջնային հարցերի լուծմանը: Ընթացիկ ծախսերը իրականացվելու են օրենսդրությամբ սահմանված կարգով, առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով: Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ: Դպրոցի բյուջեի ծախսերն ունեն հետևյալ ուղղությունները:

Ուս.տարի	Սովորողների թիվ	Ֆինանսավորում
2018-2019	143	33709,8
2019-2020	157	36771,5
2020-2021	198	42936,9
2021-2022	210	50833,9
2022-2023 (8 ամիսների համար)	201	34548,8

Ոլորտի խնդիրները կարգավորելու նպատակով անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել դպրոցի բյուջետային հատկացումները ավելացնելու և այլ միջոցներ հայթայթելու ուղղությամբ, դպրոցի բյուջեում ֆինանսական մուտքերը և դրանց փոփոխությունները կանխատեսելու, նախահաշիվ կազմելու, ֆինանսական միջոցները նախահաշվին համապատասխան ծախսելու, հաշվետվություններ կազմելու համար: Դպրոցի կարիքները հոգալու համար անհրաժեշտ է ներգրավել լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ բարեգործական աջակցություն, արտաբյուջեի ձևավորում, հովանավորներ, բարերարներ, շրջանավարտների խորհուրդ: Հաստիքացուցակը, նախահաշիվն ու ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրված են դպրոցի կայքում:

11. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

- Յուրաքանչյուր գործողության համար մշակված են վերահսկողության մեխանիզմներ, որոնք հաստատված են խորհրդի կողմից:
- Յուրաքանչյուր գործողության համար սահմանված են հաշվետվությունների ձևերն ու ժամանակացույցը, որոնք հաստատված են խորհրդի կողմից:
- Ծրագրի վերահսկողությունն իրականացվում է ուսումնական հաստատության կառավարման խորհրդի կողմից՝ տարեկան առնվազն երկու անգամ՝ յուրաքանչյուր կիսամյակի վերջում:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

No	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահման-ված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման/ առկայության դեպքում/ պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ	Նշումներ

Հաշվետվությունը պետք է ներառի յուրաքանչյուր կատարողական ցուցանիշի կատարման մասին անհրաժեշտ փաստացի տվյալներ, հիմնավորող փաստաթղթեր, վերլուծություններ, որոնք կցվում են հաշվետվության ձևաչափին:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

2023-2028 թվականների դպրոցի զարգացման ծրագրում տեղ գտած բոլոր դրույթներն իրատեսական են, իրագործելի, վերջնարդյունքները՝ չափելի: 2022-2028 թվականի զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքների համար կան արդեն ձևավորված ամուր հիմքեր: